ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2011 թվականի N 4-Ա

ք. Հրազդան

1995 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, 1995 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց զորակոչային տեղամասերում կցագրման աշխատանքներ կազմակերպելու և անցկացնելու համար

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 1995 թվականին ծնված պատանիների և ավագ տարիքի անձանց կցագրումը զորակոչային տեղամասում անցկացնել 2011 թվականի ընթացքում:

2. Կցագրում անցկացնել Կոտայքի տարածքային զինվորական կոմիսարիատում:

3. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Կոտայքի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Ուլիխանյան

Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ մասնագետներ.

թերապևտ	Մ. Հայրապետյան
վիրաբույժ	Ա. Ներսիսյան
ակնաբույժ	Ա. Սողոմանյան
քիթ-կոկորդ-ականջ	Ն. Հարությունյան
նյարդաբան	Լ. Մարտիրոսյան
ատամնաբույժ	Վ. Հարությունյան
հոգեբույժ	Շ. Գրիգորյան
մաշկավեներաբան	Վ. Առուստամյան
բուժքույր	Լ. Աբրահամյան

4. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման 1-ին կետի պահանջների համաձայն:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման 3-րդ կետի դրույթների:

6. <<Աբովյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Պետրոսյանին՝

Ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման:

Ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

7. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել բոլոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

Համաձայն զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Սույն որոշման աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Կոտայքի զինվորական կոմիսար, գնդապետ Ա. Ուլիխանյանի վրա:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանի վրա:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ